ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2023թ. ՈՒՄՈ/116-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N1550-Լ որոշման 11-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված N3 հավելվածի 19-րդ կետի 16-րդ և 17-րդ ենթակետերով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների

գործունեության համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝ համաձայն N1 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալին՝ համաձայն N2 հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը վերապահել աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ համաձայն N3 հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

30.03.2023

X

VERIFIED OCSP 30.03.2023 16:39:47 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2023 թվականի մարտի 30-ի ՆՄՈ/116-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն.
2. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն.
3. Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին.
4. Զորահավաքային նախապատրաստության բաժին:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 30.03.2023 09:30:25 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2023 թվականի մարտի30-ի ՆՄՈ/116-Ա. որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն.
2. Կրթության, մշակույթի և սպորտի վարչություն.
3. Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 30.03.2023 09:29:28 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N3
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2023 թվականի մարտի -ի ՆՄՈ/116-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսական վարչություն.
2. Աննակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն.
3. Իրավաբանական բաժին:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 30.03.2023 09:10:02 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023